

«ԳԼՈՒԽ» ԲԱՂԱԴՐԻՉՈՎ՝ ՄԱՐԴՈՒ ՄՏԱՎՈՐ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ
ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԸ

ՂԱԶԱՐՅԱՆ Հ. Զ.

Իմաստային դաշտը տարբեր խոսքի մասերին պատկանող, սակայն մեկ հասկացություն արտահայտող բառերի ամբողջությունն է: Բառային միավորների և հասկացության առնչությունը, որն ընկած է դաշտի միավորման հիմքում, կարող է տարբեր լինել: Բառը կարող է հասկացություն արտահայտել և վերջինիս հետ առնչվել միջնորդավորված ձևով՝ իր իմաստային կառուցվածքի ստորադասական բաղադրիչների միջոցով: Բառային նշանները, որոնց իմաստային կառուցվածքում հատկանիշը զբաղեցնում է գերիշխող դիրք և համընկնում դաշտը միավորող հասկացության հետ, կազմում են նրա միջուկը, իսկ այն բառային միավորները, որոնցում այդ հատկանիշը ստորադասական դիրքում է, եզրում են: Քանի որ բառային միավորների մեծ մասի կազմությունն ունի մեծաքանակ հատկանիշներ, դրանք կարող են ընդգրկվել հասկացական բազմաթիվ դաշտերում՝ իրենց իմաստային հատկանիշների քանակին համապատասխան, իսկ դաշտերը՝ որպես բառային նշանների բազմություններ, խաչաձևվում են և հստակ սահմաններ չունեն¹:

Միևնույն հասկացությունը կարող է մի դեպքում արտահայտվել բառով, մյուս դեպքում՝ դարձվածքային միավորով, որը պարզապես հուզարտահայտչական տեսակետից գունավորում, պատկերավորում է տվյալ հասկացությունը²: Այսինքն՝ դարձվածքները, ինչպես և բառերը, կարող են ընդգրկվել իմաստային դաշտերում: Այս դեպքում լեզվական նշված միավորները համախմբվում են ըստ իրենց բաղադրիչների արտահայտած ընդհանուր իմաստի՝ անկախ իրենց քերականական, կառուցվածքային, ոճական և այլ առանձնահատկություններից:

«Գլուխ» բաղադրիչով կազմված դարձվածքների իմաստային դաշտերից մեկի՝ մարդու մտավոր կարողության իմաստն արտահայտող դարձվածքները մաս են կազմում մի ավելի մեծ իմաստային՝ մարդու հատկանիշներ արտահայտող դաշտի, որը թերևս ամենաձավալունն ու ամենահարուստն է իր ենթադաշտերով և արտահայտած իմաստային նրբերանգներով:

Մարդու մտավոր կարողության հատկանիշն արտահայտող դարձվածքները պայմանականորեն բաժանել ենք ենթադաշտերի՝ 1. խելք, բանականություն, գիտակցություն, 2. մտավոր գործունեության ընթացքը, 3. մտածելու, հասկանալու, դատելու կարողությունից զուրկ լինելը, անուշաղբություն, մոռացկոտություն արտահայտող դարձվածքներ:

¹ Вердиева З. Н., *Семантические поля в современном английском языке*, М., 1986, с. 4.

² Չախուկյան Գ., Աղայան Է., Առաքնյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, ար. Ա, Ե., 1980, էջ 483:

1. Խելք, բանականություն, գիտակցություն արտահայտող դարձվածքների ենթադաշտ: Այս դարձվածքներում «գլուխ» բառն ունի փոխաբերական «խելք» իմաստը, որն արդյունք է գործառույթի նշանակության փոխանցման: Բերենք այս ենթադաշտում տեղ գտած հայերեն, ռուսերեն և անգլերեն դարձվածքներ. նշենք, որ բազմիմաստ դարձվածքների դեպքում դիտարկել ենք միայն այս ենթադաշտին բնորոշ իմաստները:

Խելքը գլխին – 1. Խելքը, խելացի, դատող, կշռադատող, հասկացող, բանիմաց. *Բա խելքը գլխին կնիկարմատն ըտենց բան կանի՞ (Ն, 11): Ասում են, որ շատ տարիներ սրանից առաջ Դանիելը խելքը գլխին մարդ էր, ընտանիքի տեր (ՇԵ, 414):* 2. Ուշադիր, մտածված:

Գլխում / գլուխը խելք լինել (ժխտ., հարց.) – 1. Ուշքն ու միտքը վրան լինել (չլինել), զգաստ վիճակում լինել: 2. Խելք լինել, որևէ բանից հասկանալ:

Գլուխ հանել (որևէ բանից) – 1. Հասկանալ, կողմնորոշվել. *Միայն լեռնային վայրերին սովոր նժույգները կարողանում էին գլուխ հանել այս խավարի մեջ նման մի ընթացք (ԴԴ, 550): Եվ սա էր անսպասելին, որից չէր կարողանում գլուխ հանել Նյուսալավուրտը (ԴԴ, 959):*

Գլխի/գլխու լինել – Հասկանալ, գիտակցել, իմանալ բանի էությունը. *Գլխի՞ ես, թե ինչ եմ ասում: Խոտը հասել է, հարել է հարկավոր, որ ետացնես, համը կփոխի (ԽՍ, 349):*

Խելքը գլուխը (արևմտհ.), նույնն է՝ խելքը գլխին. *Կամ շուտ ճանապարհ ընկնեիր, որ ժամանակին հասնեիր, կամ թե խելքդ գլխիդ պահեիր ու ճանապարհից չմոլորվեիր (ՊՊ, 11):*

Уч,ная голова – Շատ խելացի, կարդացած, սովորած անձ. *Он ученая голова – это видно, и сведений нахватил тьму, но только объясняет с таким жаром, что не помнит себя (ԴН, 12).*

С царем в голове – Շատ խելացի, հնարամիտ. Но он любил выставлять себя более исполнителем чужой идеи, чем со своим царем в голове (ДФИ, 40).

Умная голова – Խելք, խելացի. *Здорово занимался, умная была голова! (ԲИ, 271).*

A long head/long – headed (բառացի՝ երկար գլուխ) – Խորաթափանցություն, հեռատեսություն. *But he never argued with an uncle, in that way preserving their opinion of him as a “long-headed” chap, and the legal care of their property (GJC, 82).*

A clear head / clear-headed (բառացի՝ մաքուր գլուխ) – Պայծառ գլուխ, միտք, խելք. *Fleur has a very clear head, my dear (GJSS, 43). And Mr. Morse remarked afterward that he seemed a very clear-headed young man (LJ, 105).*

Have (got) a (good) head on one’s shoulders / with a head on one’s shoulders (բառացի՝ լավ գլուխ ունենալ ուսերին) – Ուսերին գլուխ ունենալ,

դատող լինել. *You haven't got that trig head on your shoulders for nothing* (CAH, 510).

Have (got) one's head screwed on the right way (բառացի՝ գլուխը ճիշտ ամրացված լինել) – Ուսերին գլուխ ունենալ, դատողություն ունենալ. *“Soames did very well”, he added; “he's got his head screwed on the right way* (GJM, 285). *I found myself growing excited as Mama related what a boy Adam had been for winning marbles, how his “head was screwed on the right way”* (CAG, 52).

Այս ենթադրաշտում տեղ են գտել նաև մի շարք այլ դարձվածքներ՝ գլուխը դուրս գալ – խելքը կտրել, հասկանալ, խելահաս լինել, գլխին խելք կա – խելոք է, մտածող է, գլուխ ունենալ – 1. խելոք, գիտակից, հասկացող լինել, 2. գիտակ՝ ծանոթ լինել, որևէ բան հասկանալ, իմանալ, он всему делу голова – նա ամեն ինչից հասկանում է, գլուխ է հանում, голова на плечах – շատ խելոք է, иметь голову на плечах – խելոք, հնարամիտ լինել, светлая голова – 1. շատ խելոք, մտածող, տրամաբանող, 2. խելոք մարդ, голова варит – դատող, հասկացող, с головой – 1. շատ խելոք, ընդունակ, 2. գիտակցված, մտածված, одна голова хорошо, две лучше – մի գլուխը լավ է, երկուսն ավելի լավ, և այլն, have an old head on young shoulders (բառացի՝ երիտասարդ ուսերին ծեր գլուխ ունենալ) – երիտասարդ տարիքի համեմատ խելացի, իմաստուն լինել, two heads are better than one (ասացվ.) – (բառացի՝ երկու գլուխն ավելի լավ է, քան մեկը) – մի խելքը լավ է, երկուսն ավելի լավ, և այլն:

Նկատելի է, որ այս իմաստային ենթադրաշտը առկա է բոլոր երեք լեզուներում: Դարձվածքները մարդուն բնորոշում են որպես խելացի, մտածելու և դատողություններ ու եզրահանգումներ անելու ունակ էակի: Բերված դարձվածքները, բացի իրենց հիմնական իմաստից, արտահայտում են նաև մի շարք իմաստային նրբերանգներ. այսպես՝ հայերենում նկատելի են սթափության, բանիմացության, հեշտ կողմնորոշվելու ու կշռադատելու, ռուսերենում՝ կրթվածության և հնարամտության, իսկ անգլերենում՝ խորաթափանցության և հեռատեսության նրբիմաստները: Նշենք, որ մեկ ընդհանուր իմաստ արտահայտելով հանդերձ՝ դարձվածքները պատկանում են կառուցվածքային ամենատարբեր տիպերի, և հետևաբար՝ նրանցում գործում են քերականական տարբեր կարգեր:

2. Մտավոր գործունեության ընթացքն արտահայտող դարձվածքներ՝
ա. ընկալումը, հասկանալն ու հասկացնելը, միտք ծագելը՝

Գլխի գցել / ձգել / քցել – 1. Մեկին մի բան հասկացնել, բացատրել, պարզաբանել. *Ես լավ չհասկացա, ինչ ասեցիր դու, աղա միրզա՛, մին էլ ինձ գլխի քցի* (ՊՊ, 280): 2. Բացահայտել, հայտնի դարձնել:

Գլխում նստեցնել – 1. Լավ հասկացնել: 2. Համոզել. *Սուտից – դորդից շատ բաներ ասացի, էգեբա մե բահրով գլխում նստացնիմ* (Բ, III, 111):

Գլուխը մտցնել – 1. Մեկին մի բան հասկացնել, հավատացնել. *Երբ սատանան մարդու գլխի մեջ մի չար միտք է մտցնում, սրտի մեջ էլ մի ահ է*

գցում (ՇԵ, 299): *Ես գիտեմ, որ այդ պարոնը քո գլուխը մտցրել է մի քանի վայրիվերո մտքեր (ՇԵ, 292):*

Գլխին / գլուխը փչել / մեկի / (հեզն.) – 1. Մեկի մտքով անցնել, միտք ծագել: 2. Մեկի գլուխը մտցնել, մեկին հավատացնել. *Միառժամանակ ես ճանճուր Բվանիչի սեղանից ձրի ճաշ կամ ընթրիք որսալու համար մտածեց նրա գլուխը փչել մի քանի դատարկ հույսերով (Ը, III, 141):*

Գլխին գոռ տալ (խսկց., հեզն.) – Ճգնել հասկանալ, ըմբռնել. *Հայվան, քեզ սալդաթ են ուղարկել, էլ գլխիդ ի՞նչ ես գոռ տալիս, - ասաց Բասնանց տղան նամակը կարդալիս (ԲԱ, 41): Քաղցած փորը մարդու գլխին գոռ է տալիս, - ասաց Գրիշան (ՇՔ, 77):*

Գլուխը մտնել – 1. Մի բան դժվարությամբ հասկանալ, ըմբռնել. *Նրբանք կմտնեն Բագրևանդից, իսկ սրանք այստեղ քաշվել են վրանները: Գլուխս չի մտնում (ԴԴ, 448):* 2. (Ժխտ.) Չհամաձայնել, հավանություն չտալ. *Ես չեմ հասկանում. - Գլուխս չի մտնում, - ձայնը բարձրացրեց նա, - թե ինչու՞ մենք պետք է արյուն թափենք (ԴԴ, 258):* 3. Որոշել, մտադրվել. *Ինչ է գլուխը մտել պարսկերեն հա պարսկերեն, պարսից գորական արվեստ, պարսից պաշտոնյա, - վրդովված խոսեց նա (ԴԴ, 365):* 4. Մի բան հեշտությամբ հասկանալ, հասկացվել:

Գլուխը մի միտք ընկնել / ծագել – Գլխում մի բան հղանալ, հանկարծակի մի բան որոշել. *Գարեգինի այդ խոսքերի վրա մի նոր ենթադրություն ծագեց գլխումս, և նրա խորհրդավոր հարսնացուն շատ զվարճալի գույնով ներկայացավ ինձ (Ն, 231):*

Գլխի ընկնել – Մի բան հասկանալ, կռահել, գուշակել մտադրությունը. *Հասկացա, որդի, հասկացա, բայց էլ ինչի՞ տերտեր եմ, որ էդ երկու խոսքն էլ գլխի չընկնեմ (ՊՊ, 20): Նա չէր հարցրել, բայց գլխի էր ընկնում, որ Վասակը նրանց տանում է կամ արքունիքի ծառայության, կամ պարսկական կրթության (ԴԴ, 374):*

Գլխում միտք ծագել – Մի բան մտածել, մտադրություն առաջանալ. *Բայց այդ միջոցին հանկարծ մի միտք ծագեց նրա գլխում, և նրա դաժան դեմքը մի ընդհանուր կարծես թե պայծառացավ (Ն, 55):*

Заходить в голову – Գլխում միտք հայտնվել, հառնել գիտակցության մեջ. *Стало быть, уж не вошь человек для меня, а вошь для того, кому это и в голову не заходит и кто прямо без вопросов идет (ДФП, 404):*

Взбираться в голову (մտքերի մասին) – հանկարծ հայտնվել. *Ему следовало отдохнуть от всех этих новых знакомств, столкновений, разговоров, от этого чада, который забрался ему в голову, в душу (ТИТ, 100):*

Взбирать в голову (մտքի մասին) – Հանկարծ հայտնվել ուղեղում, միտք հղանալ, մտածել, կարծել. *Бог знает какой вздор взбрел тебе в голову, и ты плачешь (ТИН, 270):*

Вы, Порфирий Петрович, пожа-

луйста, не заберите себе в голову, - с суровой настойчивостью произнес Раскольников, - что я вам сегодня сознался (ДФП, 441).

Лезть в голову – Հայտնվել մտքում, գիտակցության մեջ. *Теперь же он с тоской думал, что впереди целый день одиночества, и в голову ему лезли все такие странные, неудобные и ненужные мысли* (КА, 105). *Уж ведь совсем убитый хожу, а тут еще дурь в голову лезет!* (ОА, 97).

Ударять в голову – Հանկարծ՝ հանկարծակի հայտնվել մտքում. *Он даже усмехнулся на себя, как вдруг другая тревожная мысль ударила ему в голову* (ДФП, 76). *Что-то, казалось, постороннее, ударило Романову в голову* (КА, 102).

Приходить в голову – 1. Հառնել գիտակցության մեջ, գլուխը մըտնել. *И я сегодня же бы увез ее, если б не пришла мне в голову мысль, которая меня остановила* (ТИТ, 28). *Но вдруг мне в голову пришло попытать последнее средство, чтобы хоть немного смягчить суровую старуху* (КА, 28). 2. Պատկերվել գիտակցության մեջ, հասնել գիտակցությանը, գիտակցել. *Разумеется, что эта счастливая мысль пришла сперва в голову молодому человеку и что она весьма понравилась романтическому воображению Марьи Гавриловны* (ПАД, 201). *С первого раза, как я ее увидел, тотчас же пришло в голову, что эта собака не может быть такая, как все собаки* (ДФУ, 127).

Мелькнуть в голове – Միտք ծագել, հայտնվել, անկայծել. *Счастливая мысль мелькнула в голове зрителя* (ПАД, 225).

Ломать голову – Խորը մտածել, գլուխ կոտրել՝ փորձելով գտնել մի հարցի լուծումը, մի բանի պատասխանը. *А что касается до будущего, то о нем тоже не стоит голову ломать* (ТНО, 501)

Make head or tail of something (այսուհետև՝ smth) – (բառացի՝ մի բանից գլուխ կամ պոչ սարքել) Հասկանալ ինչ-որ բան՝ ժխտական նախադասություններում կամ հաստատական նախադասություններում՝ ժխտ. իմաստով. *But I could see they couldn't make head or tail of the old creature – too far gone, eh?* (GJS, 109/. *They answer you in a way nobody can make head or tail of, and that without prejudice* (GJS, 96).

Put smth into somebody's (այսուհետև՝ smb's) head (բառացի՝ մի բան դնել գլխում) – Մեկին մի միտք ներշնչել, հուշել. *Though what could have put cremation into her head they could not think!* (GJC, 10). *Among other whims and fancies which they taught her there, they put some nonsense into her head about always wearing white* (CW, 537).

Put ideas in smb's head (բառացի՝ մեկի գլխում գաղափարներ դնել) – Մեկի գլուխը մտքեր լցնել. *To get Irene out of London, away from opportunities of going about and seeing people, away from her friends and those who put ideas into her head!* (GJM, 77). *"I've no doubt you've been puttin' some grand, fancy ideas in her head all this time"* (САН, 425).

Knock smth into smb's head (բառացի՝ մի բան խփել մեկի գլխում) – Մեկի գլուխը (մի բան) մտցնել. *The successful organization of Robert's carriage trade trust had knocked in the head any further thought on his part of taking an interest in the small Indiana wagon manufactory* (DThJ, 266).

Have / get ideas into one's head (բառացի՝ գլխում մտքեր ունենալ / ծագել) (խսկց.) – Գլուխը զանազան մտքեր մտցնել. *"I can't get those genders into my head"* (CAH, 30).

Come into one's head (բառացի՝ գլուխը գալ) – Գլխում ծագել, հայտնվել. *After that rhyme, which came into his head all at once, he became consiencious of music, very soft – lovely! Mum playing!* (GJC, 256). *Now one clear idea came into her head.* (DThS, 256).

Enter one's head (բառացի՝ գլուխը մտնել) – Մտքում հայտնվել, ծագել. *And the preposterous idea that she might accompany him never entered her head* (CAH, 123). *This was something which had never for a moment entered her head* (DThS, 305).

բ. Մտածելու դժվարությունները, լարվածությունը, հետապնդող մտքերը, ուշադրությունն ու հիշողությունը՝

Խելքը գլուխը գալ – 1. Սթափվել, ուշքը վրան գալ: 2. Խելոքանալ, խելքի գալ. *Հետո, երբ խելքս գլուխս եկավ, հասկացա, թե ինչպես մի կին կարող է իր մարդին հողին տակ դնել և նստել վրան* (ԹՎ, 89): *Խեղճ կինը երեք ամիս անկողին է ընկնում, մինչև որ ապաքինվում է, խելքը գլուխը գալիս* (ԹԾ, 310):

Խելքը գլուխը ժողովել / հավաքել – Սթափվել, ուշքի գալ, լրջանալ, իրեն հավաքել, հասկանալ, ուշադիր լինել. – *Քեզ ասում են, Միշա, խելքդ գլուխդ հավաքի՛ր* (Դ, III, 505): *Մատյան գունդը եկավ, և պարսից զորքը խելքը գլուխը հավաքեց, կուռ շրջապատեց Վարդանին* (ԴԴ, 964):

Խելքը գլխին գալ, նույնն է՝ խելքը գլուխը գալ. *Հիմի էլ երկյուղ մի անիլ, խելքս գլխիս եկավ* (ՊՊ, 376):

Գլխով անցնել / անց կենալ – 1. Մի բանի մասին մտածել՝ խորհել, հանկարծակի միտք ծագել. *«Հեռացնում է իրենից», - անցավ Վարդանի գլխով* (ԴԴ, 321): *Հագար ու մի միտք գալիս անցնում էր նրա գլխով* (ԲԱ, 40):

Держать в голове / уме – 1. Մշտապես հիշել. *Да уж коли ты такие дурацкие мысли в голове держишь, ты бы при ней, по крайней мере не болтал бы при сестре* (ОА, 100): 2. Մտածել, ենթադրել ինչ-որ մի բան:

Сидеть гвоздем в голове / засесть гвоздем в голове – Անընդհատ, մշտապես հետապնդել (մտքեր). *“А все оттого, что Вольтер в голове сидит”* (ТИД, 26).

Не выходит из головы – Միշտ հիշվում է, չի մոռացվում. *В эти осенние дни образ Олеси не выходит из моей головы* (КА, 32). *Дома целый день у него не выходили из головы арестанты и солдаты с ружьями, и непонятная душевная тревога мешала ему читать и сосредоточиться* (ЧА, 50).

Не идет из головы – Միշտ հիշվում է, չի մոռացվում. *А все-таки нейдет она у меня из головы, хоть ты что хочешь* (ОА, 97).

Run in / through one's head / mind (բառացի՝ վազել մեկի գլխում) – Պտտվել / նստել գլխում (միտքը, երաժշտությունը). *And all the while there was running through his head Kipling's words* (LJ, 202).

Take it into one's head (բառացի՝ վերցնել գլխի մեջ) – Մի բան գլուխը մտցնել, երևակայել. *What if Irene were to take it into her head to – he could hardly frame the thought – to leave Soames?* (GJM, 72). *You must know it as well as I do what the notion was which my husband took into his head* (CW, 534).

Take it into one's head to do smth (բառացի՝ գլուխը վերցնել մի բան ա-նել) – Գլուխը մտցնել (մի բան անել). *One afternoon Philip took it into his head to go over to Tercanbury and see his old school* (MWH, 556). *My dear father, "Adam replied coolly, if any old man takes it into his head to drown himself you can't exactly cover that up"* (CAG, 133).

Get it into one's head to do smth (բառացի՝ գլուխը մտցնել մի բան անել) – Մի բան գլուխը մտցնել, որոշել. *For some reason he's got it into his head that he wants to go to Munich* (MWC, 55).

Այս ենթադրաշուում տեղ են գտել նաև՝ գլուխը մխել (բրբ.) – մեկին գոռով մի բան հասկացնել, գլուխը խելք դնել – մեկին խելք սովորեցնել, գլուխը այբ - բենի կտոր մտնել (մտցնել) - գրագիտություն սովորել (սովորեցնել) որևէ բան հասկանալ (հասկացնել), գլուխը բան մտնել – որևէ բան հասկանալ, ընդունակ լինել, որևէ բան հասկանալու, ըմբռնելու ընդունակ լինել՝ ընդունակություն ունենալ, գլուխ դուրս տանել (բրբ.) – հասկանալ, ըմբռնել, գլխի դնել (բրբ.) – հասկացնել, սովորեցնել, գլխի գցել, գլխում հալվել / եփվել / եփել - մի բան հասկանալ, գլխի ընկնել, գրլխում եփել / հալել (խսկց.) – մեկին մի բան լավ, մանրամասն հասկացնել, գլխի մեջ միտք ծագել – միտք հղանալ, որոշել, խելքը գլուխը բերել – 1. սթափեցնել, ուշաբերել, 2. խելքի գալ, խելքանալ, գլխում ամրանալ – յուրացվել, հիշվել, հասկանալ, յուրացնել, գլխի մեջ մեխել / մեխվել – հիշողության մեջ ամրապնդել / ամրապնդվել, միշտ հիշել, չմոռանալ, уложить в голове – հասկանալ գիտակցել, պատկերացնել, царь в голове – բանականություն, խելք, втемашиться в голову – ինչ-որ մեկը գլուխը մի բան է մտցրել, голова забита – գլուխը լի է մտքերով, հոգսերով, զանազան ոչ պիտանի գիտելիքներով, забивать себе в голову – ինչ-որ մտքից համառորեն կառչել, вбивать себе в голову /в башку – ինչ-որ

բանում համոզվել, համառորեն կառչել ինչ-որ մտքից, перебирать в голове – հիշել, մտաբերել մի բան մյուսի հետևից, մտքերը դասավորել, не идет в голову – մեկը չի կարողանում ստիպել իրեն մտածել մեկի, մի բանի մասին, get through one's / smb's head (բառացի՝ մեկի գլուխը մտնել) – հասկանալ, պատկերացնել, ստիպել ինքնիրեն հասկանալ, հավատալ, stuff smb's head with smth – (բառացի՝ մեկի գլուխը լցնել ամեն տեսակ բաներով) մեկի գլուխը լցնել մտքերով, կասկածներով, ենթադրություններով, beat smth into smb's head (բառացի՝ մեկի գլխում մի բան խփել) – մեկի գլուխը մի բան մտցնել, a / one's King Charles's head (բառացի՝ մեկի Չարլզ թագավորի գլուխ) – հանգիստ չբողոքող միտք, դարձվածքները:

Այս ենթադաշտի դարձվածքները նույնպես իրենց հիմնական իմաստի հետ մեկտեղ արտահայտում են նաև որոշ նրբիմաստներ: Հայերենում առկա են մտատանջվելու, մեկին մի բանում համոզելու, անուշադրության, որոշում ընդունելու և գուշակություն անելու, ռուսերենում՝ համառության, իսկ անգլերենում՝ մեկին մի միտք ներշնչելու իմաստային նրբերանգները: Այստեղ ևս, ինչպես նախորդ դեպքում, դիտարկվել են միայն այս ենթադաշտին բնորոշ իմաստները:

3. Մտածելու, հասկանալու, դատելու կարողությունից զուրկ լինելը, անուշադրություն, մոռացկոտություն արտահայտող դարձվածքներ: Իմաստային այս դաշտում քիչ չեն նաև այն դարձվածքները, որ կարող են ընդգրկվել մեկ այլ ենթադաշտում, այն է՝ մտավոր կարողության՝ մըտածելու, հասկանալու, դատողություններ անելու ունակություններից զուրկ լինելու, անուշադիր կամ մոռացկոտ լինելու իմաստ արտահայտող դարձվածքները: Այսպիսիք հանդիպում են ուսումնասիրվող բոլոր երեք լեզուներում:

Գլուխը դատարկ – Հիմար, անխելք, տգետ, անհասկացող. *Պու հո գիտես, որ չեն խոսում գլուխները դատարկ լինելուց* (Ն, 232): *Պուն մեկ մուքթա փեսա ես գթի, որ ջիբերը գլխիցը ավելի դատարկ է* (Բ, I, 383):

Տափակ գլուխ (անարգ.) – Հիմար, անճաշակ. *Անցնում են տարիներ, անգույն, անկրակ գոյության տարիներ, որ տափակ գլուխներն անվանում են խաղաղ ընտանեկան կյանք:* (ՇԵ, 359): *Այդ հիմար, ծիծաղելի բառը, որ այնքան հաճելի է տափակ գլխի տեր մարդկանց* (ՇԵ, 50):

Գլուխը դուրս – Հիմար, ապուշ. – *Կրակ ունե՞ս, - հարցրեց ձիավորը, - չախմախիս քարը կորել է, ամբողջ օրը չեմ ծխել, գլուխս դուրս է դարձել* (Բ, IV, 56):

Գլխին խելք մնալ (հարց. և ժխտ.) – Շատ զբաղված, ցրված անուշադիր լինել. – *Մտադի՞ր, - զարմացավ Գարեգինը, - խելք, միտք մնացե՞լ է գլխումս, որ մտադիր լինեմ որե՛ բան անելու* (Ն, 300):

Գլխից դուրս տալ – 1. Անմիտ խոսել, անհեթեթ բաներ ասել: 2. Իրենից հնարել, հորինել, սուտ խոսել. – *Պատարկ-դատարկ ի՞նչ ես գլխից դուրս տալիս, ձեզ որ մնա թագավորական սալդաթը կռիվ չպիտի անի, որ ձեզ նեղություն չգա* (ՊՊ, 176): *Ի՞նչ ես սարսաղ-սարսաղ գլխիցդ դուրս տալիս, Մելիքն ինչ կուզի, թող լինի* (Բ, I, 336):

Без головы – 1. Հիմար, բութ, բթամիտ: 2. Չմտածված կերպով. *Если же я так поносил его вчера, то это потому, что вчера я был грязно пьян и еще безумен, да, безумен, без головы, сошел с ума совершенно, и сегодня стыжусь того* (ДФП, 205).

Без царя в голове – Շատ հիմար, անհեռատես. *Хлестаков, молодой человек, лет двадцати трех, тоненький, худенький, говорят без царя в голове* (ГН, 6).

Дурья голова /башка – Հիմար մարդ. *Вексель писать? Эх ты дура, дурья ты голова...* (КА, 112).

Пустая голова /башка – Հիմար անձ, դատարկագլուխ. *Молчи, пустая голова! Слыхал я истину, бывало* (ПАП, 71).

A thick-headed thing (բառացի՝ հաստագլուխ առարկա) – Անհասկացող, հաստագլուխ մարդ. *“Oh, Tom, you poor, thick-headed thing”* (TM, 26).

Have a bad /no/ head for smth (բառացի՝ վատ գլուխ ունենալ մի բանի համար) – Մի բանից վատ գլուխ հանել, անընդունակ լինել ինչ-որ բանի:

Have a head like a sieve (բառացի՝ մաղի պես գլուխ ունենալ) – Ցրված, մոռացկոտ մարդ լինել:

A wooden head (բառացի՝ փայտե գլուխ) – Բութ, անհասկացող մարդ:

Soft / touched / weak in the head (բառացի՝ փափուկ / թույլ գլխով) – Հիմար, անխելք:

Cabbage head (բառացի՝ կաղամբի գլուխ) – Հիմար:

Այս ենթադաշտում տեղ են գտել նաև մի շարք այլ դարձվածքներ՝ գլուխը դարմանով լիքը (ժող.) – հիմար, ապուշ, անխելք, գլուխը հաստ – հաստագլուխ, բթամիտ, անհասկացող, դժվար հասկացող, գլուխը պղտորվել – միտքը պղտորվել, գիտակցությունը մթագնել, գլուխը խելք լինել (հարց. և ժխտ.) – ուշքն ու միտքը վրան լինել, գլխում մի կոպեկի խելք չկա – հիմար, տխմար, գլխում խելքի կտոր չլինել – հիմար լինել, բոլորովին խելք չունենալ, գլուխը հաստանալ – բթանալ, ապուշանալ, գլխին ձի քացի տալ (ժող.) – անխելք, հիմար դառնալ, խելքը թոցնել, голова соломой набита – հիմար է, գլուխը դարմանով լիքն է, голова садовая – անխելամիտ, ոչ հնարամիտ, голова еловая – հիմար մարդ, голова два уха (արհմրհ., գոհկ.) – դանդաղաշարժ, հիմար մարդ, дырявая голова – 1. շատ վատ հիշողություն ունեցող անձ, 2. մոռացկոտ անձ, дубовая голова / башка – բութ, հիմար մարդ, тупая голова – բթամիտ անձ, **солома в голове** – հիմար, անճար, անճարակ, мякинная голова (ժող.) – հիմար մարդ: Այս ենթադաշտի հայերեն դարձվածքներում նկատելի են նաև անճաշակության, ցրվածության և ստախոսության նրբիմաստները, ռուսերենում առկա են անհեռատեսության, անճարակության և դանդաղաշարժության, իսկ անգլերենում՝ անընդունակության իմաստային նրբերանգները:

Մարդու մտավոր կարողության իմաստն արտահայտող դարձվածքները պատկանում են կառուցվածքային ամենատարբեր տիպերի: Այսպես՝ երեք լեզուներում էլ հանդիպում ենք թե՛ գոյականական, թե՛ ածականական, թե՛ բայական դարձվածքների, ըստ որում, վերջինները ավելի մեծաքանակ են: Ինչ վերաբերում է մտավոր գործունեության ընթացքն արտացոլող դարձվածքներին, ապա ուսումնասիրված միավորները բացառապես բայական են: Անշուշտ, յուրաքանչյուր լեզվի դարձվածքներում գործում են տվյալ լեզվին բնորոշ քերականական առանձնահատկություններ: Այսպես, եթե հայերենի դարձվածքներում բաղադրիչների միջև իմաստները հիմնականում արտահայտվում են հոլովական վերջավորություններով, ինչը մասամբ առկա է նաև ռուսերենում, ապա անգլերենում՝ այդ լեզվի վերլուծական բնույթի հետևանքով հիշյալ իմաստներն արտահայտվում են նախդիրներով: Տարբեր են նաև դարձվածքներում գործող քերականական կարգերը: Մի շարք դարձվածքներ ունեն նաև իրենց համարժեքները մյուս 2 լեզուներում. օրինակ՝ գլուխը մտնել – *входить в голову* – *enter one's head*, գլուխը մտցնել – *вбивать в голову* – *put smth into smb's head*, ուսերին գլուխ ունենալ – *иметь голову на плечах* – *have a head on one's shoulders*, գլուխը մտցնել (իր) – *забивать себе в голову* – *take it into one's head*, գլխում նստել – *сидеть/засесть в голове* – *run in one's head*, գլխում (միտք) ծագել – *приходить в голову* – *come to one's head*, գլուխը դատարկ – *пустая голова* – *empty head*, светлая голова – պայծառ գլուխ – *a clear head* և այլն:

Որոշ դարձվածքներ համարժեքներ ունեն լեզուներից որևէ մեկում, օրինակ՝ ծակ գլուխ – *дырявая голова*, գլուխը դարմանով լիքը լինել – *голова соломой набита*, գլխից դուրս թռչել – *вылететь из головы*, գլուխը հաստ – *a thick-headed thing*, գլուխ կոտրել – *ломать голову* և այլն:

Հանդիպում են նաև այնպիսիները, որոնց համարժեքների միևնույն իմաստն արտահայտվում է այլ բառերով, օրինակ՝ գլուխը դդում – *садовая голова*, *дубовая голова* – *a wooden head*, *a cabbage head*, *a pumpkin head* և այլն:

Երեք լեզուներում էլ կան միայն մի լեզվին հատուկ դարձվածքներ, ինչպես՝ գլուխը բամբակ չկա – ապուշ է, գլուխը կուտ չկա – անխելք է, գլուխը (գլխում) մի կոպեկի խելք չկա – հիմար է, գլխումը ջուր խմել – չքհասկանալ, գլուխը այր-բենի կտոր մտցնել – գրագիտություն սովորեցնել, գլխին փչել – միտք անել, գլուխը դուրս տանել – հասկանալ, без головы – հիմար, ապուշ, царь в голове – խելոք, голова еловая – հիմար, голова два уха – հիմար, a long head – խորաթափանցություն, հեռատեսություն, make head or tail of smth – մի բան հասկանալ, knock/beat smth into smb's head – մեկի գլուխը մի բան մտցնել, a/one's king Charles's head – հանգիստ չթողնող (անհանգստացող) միտք, soft / touched / weak in the head – բուր, անհասկացող մարդ: Որոշ համարժեքներ միայն

իմաստային են: Վերոհիշյալ դարձվածքների շարքում քիչ չեն դարձվածքային հոմանիշները՝ խելքը գլխին – գլխին խելք կա, ученая голова – умная голова, иметь голову на плечах – голова варит, գլխի լինել – գլուխ հանել, գլխի ընկնել – գլխի գցել – գլուխը մտցնել, put smth into smb's head – put ideas in smb's head, come into one's head – enter one's head, weak in the head – touched in the head և հակահիշները՝ գլուխը խելք կա – գլխում մի կոպեկի խելք չկա, խելքը գլխին – գլուխը դղում, умная голова – дубовая голова, царь в голове – без царя в голове, приходить в голову – вылететь из головы, a clear head – a wooden head, a long head – a thick-headed thing.

Դիտարկվող բոլոր լեզուների դարձվածքներում «գլուխ» բաղադրիչն ունի «խելք» փոխաբերական իմաստը, որն արդյունք է գործառույթի նշանակության փոխանցման: Օգտագործվող դարձվածքները բնութագրում են մարդու մտավոր գործունեությունը՝ անկախ դրական կամ բացասական լինելուց: Սա, հավանաբար, կապված է այն հանգամանքի հետ, որ գլուխը, լինելով մարդու մարմնի կարևորագույն մասը, կյանքի ու գիտակցության հիմնական առանցքը՝ վաղուց ի վեր համարվել է խելքի խորհրդանիշ: Գլխի ամենակարևոր գործառույթներից մեկն էլ՝ հենց մտածելու, դատելու կարողությունը, թելադրում է դաշտի ենթադաշտերի բովանդակությունը:

Ինչպես նշեցինք, դարձվածքներից շատերն ունեն իրենց համարժեքները մյուս՝ մեկ կամ երկու լեզվում, մյուսները հատուկ են միայն այս կամ այն լեզվին: Հաճախ հիշյալ համարժեքները միայն իմաստային են, երբեմն հանդիպում են նաև բաղադրիչային համարժեքներ: Տարբեր լեզուներում իմաստային համարժեքների առկայությունը պայմանավորված է «գլուխ» բառի հիշյալ իմաստի համընկնումով, որն այդ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողությանը հատուկ ընդհանրությունների արդյունք է: Սակայն, մյուս կողմից, անհրաժեշտ է նշել, որ զուգադրվող դաշտերից և ենթադաշտերից ոչ մեկը լիովին չի համընկնում: Սա հետևանք է տարբեր ժողովուրդների պատմության առանձնահատկությունների, ավանդույթների, կենցաղի, լեզվի, յուրաքանչյուր ժողովրդի աշխարհըմբռնման, որի հետևանքով ձևավորվում են նրա լեզվամտածողության առանձնահատկությունները: Մի երևույթ, որը, անշուշտ, իր արտահայտությունն է գտնում դարձվածքային միավորներում:

«Խելք, բանականություն, մտավոր կարողություն» իմաստն արտահայտող ենթադաշտը ցույց է տալիս հատկանիշ, որի հակառակ իմաստն արտահայտում են՝ «թույլ մտավոր կարողություններ ունենալու» իմաստակիր դարձվածքները, ասել է՝ իրենց ընդհանուր իմաստով հիշյալ եր-կու ենթադաշտերի դարձվածքները հակահիշներ են (անկախ իմաստա- յին նրբերանգներից): Ինչ վերաբերում է մյուս երկու ենթադաշտերին, դրանք արտահայտում են մտավոր գործունեության ընթացքը: Ընդհանուր իմաստի հետ մեկտեղ երբեմն նկատվում են նաև իմաստային նրբերանգներ (երբեմն այս բանը նկատելի է նաև տարբեր լեզուների համարժեքներում): Դարձվածքները հիմնականում մենիմաստ են, սակայն նույնիսկ եթե դրանք բազմիմաստ են, ապա տվյալ իմաստային դաշտում դիտարկ-

վել են միայն վերջինիս բնորոշ իմաստները (որոշ դարձվածքներ իրենց մյուս իմաստներով այլ իմաստային դաշտերում են):

Յուրաքանչյուր ենթադաշտի դարձվածքները լայն առումով միմյանց հետ գտնվում են հոմանիշային հարաբերության մեջ: Իմաստային դաշտում բազմաթիվ են նաև դարձվածքային տարբերակները: «Մտավոր թույլ կարողություններ ունենալու» իմաստ արտահայտող դարձվածքներն իրենց ընդհանուր իմաստով (որպես հատկանիշ) գտնվում են հականիշային հարաբերության մեջ ոչ միայն առաջին, այլ նաև երկրորդ ենթադաշտում տեղ գտած դարձվածքների հետ:

Ըստ բաղադրիչների միաձուլության աստիճանի՝ բոլոր ենթադաշտերի դարձվածքներն էլ (բոլոր լեզուներում) դարձվածքային սերտաճումներ են՝ անօտարելի բաղադրիչներով: «Գլուխ» բառն իմաստային առումով դարձվածքների գլխավոր անդամն է: Իմաստային այս դաշտի ենթադաշտերում ընդգրկված դարձվածքներն ունեն ոճական տարբեր գունավորումներ: Դրանք կարող են օգտագործվել խոսակցական, գրքային ոճերում, բարբառներում, մամուլում, գրական լեզվի երկու տարբերակներում: Դրանցով չափազանց հարուստ է գեղարվեստական գրականությունը:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԲԱ- Բակունց Ակսել, Երկեր, Ե., 1986:
2. ԴԴ-Դեմիրճյան Դերենիկ, Վարդանանք, Ե., 1987:
3. ԹՎ- Թորոմենց Վահան, Երկեր 3 գրքով, գիրք I, Ե., 1988:
4. ԹԾ- Թորգոմյան Ծերուն, Անմար կրակներ, Ե., 1959:
5. Ն- Նար - Դոս, Պատմվածքներ, վիպակներ, Ե., 1978:
6. ԽՍ- Խանգալյան Սերո, Հողը, Ե., 1964:
7. ՇԵ- Շիրվանզադե Ալեքսանդր, Երկերի լիակատար ժողովածու, հ. IV, Ե., 1930:
8. ՇՔ- Շիրվանզադե Ալեքսանդր, Քառու, Ե., 1968:
9. ՊՊ- Պռոշյան Պերճ, Հացի խնդիր, Ե., 1968:
10. Ը- Ըաֆֆի, Երկերի ժողովածու 10 հատորով, հ I, III, IV, Ե., 1984:
11. БИ - Бунин И.С., Рассказы, М., 1983.
12. ГН- Гоголь Н. В., Пьесы, М., 1983.
13. ДФИ- Достоевский Ф. М., Идиот, М., 1981.
14. ДФП- Достоевский Ф. М., Преступление и наказание, М., 1983.
15. ДФУ- Достоевский Ф. М., Униженные и оскорбленные, М., 1971.
16. КА- Куприн А. С., Сочинения в 2-х томах, т. 1, М., 1981.
17. ОА- Островский А. Н., Пьесы, М., 1982.
18. ПАД- Пушкин А.С., Драматические произведения, проза, М., 1982.
19. ПАП- Пушкин А.С., Поэмы, М., 1982.
20. ТИД- Тургенев И.С., Дворянское гнездо, М., 1952.
21. ТИН- Тургенев И. С., Накануне, М., 1983.
22. ТИО- Тургенев И.С., Отцы и дети, М., 1983.
23. ТИТ- Тургенев И.С., Три встречи, Л., 1979.
24. ЧА- Чехов А.П., Человек в футляре. Повести и рассказы, М., 1980.
25. CW- Collins Wilkie, The Woman in White, USA, 1934.

26. CAG- Cronin Archibald, The Green Years, GB, 1979
27. CAH- Cronin Archibald, Hatter's Castle, M., 1963.
28. DThJ- Dreiser Theodore, Jennie Gerhardt, M., 1972.
29. DThS- Dreiser Theodore, Sister Carrie, M., 1968.
30. GJM- Galsworthy John, The Man of Property, M., 1954.
31. GJC- Galsworthy John, In Chancery, M., 1954.
32. GJS- Galsworthy John, The Silver Spoon, M., 1956.
33. GJSS- Galsworthy John, The Swan Song, M., 1956.
34. LJ- London Jack, Martin Eden, M., 1953.
35. MWC- Maugham William, Complete Short Stories, v. I-IV, GB, 1980.
36. MWH- Maugham William, Of Human Bondage, L., 1975.
37. TM- Twain Mark, The Adventures of Tom Sawyer, M., 1948.

**СЕМАНТИЧЕСКОЕ ПОЛЕ ФРАЗЕОЛОГИЗМОВ С КОМПОНЕНТОМ “ГОЛОВА”,
ВЫРАЖАЮЩИХ УМСТВЕННЫЕ СПОСОБНОСТИ ЧЕЛОВЕКА**

КАЗАРЯН А. З.

Резюме

Семантическое поле в лингвистике представляется как совокупность слов различных частей речи, объединенных общностью выражения одного понятия. Именно понятие и служит основой интеграции слов в поле.

Одно и то же понятие может в одном случае быть выражено словом, в другом – фразеологической единицей, которая с эмоционально-выразительной точки зрения окрашивает данное понятие. Из этого следует, что фразеологизмы, как и слова, могут быть включены в семантические поля, при этом лингвистические единицы включаются в вышеуказанные поля по общему смыслу их компонентов независимо от их грамматических, структурных, стилистических и других особенностей.

Изучение фразеологизмов с компонентом “голова” выявляет некоторые сходства и различия как между семантическими, так и между другими особенностями фразеологических единиц армянского, русского и английского языков, что свидетельствует об общности и различиях, существующих в языковом мышлении народов-носителей этих языков.